





# ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒՆԿԱՆ

1313

ՏԵԼՈՒՆ ԱՆՏՈՒՄՆԻ ՊԵՏՐՈՍԻ Թ.

ՊԵՏՐՈՒՆՅԱՆ ԿԻՆՏԻՆՈՅ

Կաթողիկոսի Հայոց Ռազմաբանաց

1313

առ Աստուածարեալ

Արքեպիսկոպոստունս եւ Եպիսկոպոստունս եւ առ ամենայն Ղաաս  
Յ. Սարգսպետաց, Երիցանց եւ Սանահանաց եւ համօրէն  
Հաւատացելոց  
Կաթողիկոսական Սինակին:

2701

Դիւան  
Արտի Ալպոյանեանի  
Գանձար - Մարտիս



Հ. Ե. Ե. Ե. 1867.

Տպագրութիւն Ս. Ժ. Տարածման Հաւատոյ.  
Տեղաւորութեան Ընդ. Պետրոսի Աստուծոյ Մարիէթի:



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS 309

LECTURE NOTES

BY

PROFESSOR JOHN H. COOPER

1962

CHICAGO, ILLINOIS

UNIVERSITY OF CHICAGO PRESS

## ՅԻՄՈՒՄ ԿՐԻՍՏՈՒՄ ԾԱՌԱՅ

ԱՆՏՈՆ ԳՆՏՐՈՍ Թ. Գաղտնաբազմ Տանն Արևիկոյ,  
Կաթողեկոս Հայոց Ուղղափառաց Տաստատեալ է սուրբ Գա-  
Տէն Հռովմայ, պատուական Եղբարց Մերոց ակթուակցաց՝  
Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց եւ ամենայն Ուխտի Արքայ  
Արքեպիսկոպոսաց՝ Արքեպիսկոպոսաց եւ Արքեպիսկոպոսաց եւ  
ամենայն Հաւատացեցող որդւոց Մերոց սիրելեաց Հնորճք, սէր  
եւ խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ, եւ է Տեառնէ  
Յիսուսէ Կրիստոսէ :



Տեղեակ էք, ամենապատիւ Եղբարք, եւ սիրելի Որդեակք,  
Թէ բանն եւ հինգ տարիէ հետէ ինչ ծանր բեռ մեր ուսերը  
կը ճվէր, յորմէ հետէ Կաթողեկոսի անքնին կարգաւո-  
րութեամբ եւ Աւաքեղանի Աթուոյն տնօրէնութեամբ Կա-  
տողաճական վիճակը Մեզի յանձնուեցաւ : Բազմադակ աս ժա-  
մանակն ուրիշ բան մը դիտած չենք, բայց եթէ Մեր տկար  
զորութեան չափուն համեմատ՝ կաթողեկէ Արքեպիսկոպոսաց  
գեղեր ու ցորեկ ծառայելով Աստուծոյ մեծագոյն փառքը յառա-  
ջագէմ ընելու ջանալ : Ասոր հոգ տարած ենք, եթէ չենք սխա-  
լը, Թէ Մեր ամէն գիւրութիւնները զսէրով եւ Թէ ոչ ինչ  
աշխատութիւն ինայելով : Աս վիճակին նորութիւնը, անոր մէջ  
գանուած տարրներուն անորոշ հանգամանքը, ընկերական շարա-  
բերութեանց ալեկոծ կացութիւնը, բոլորն ալ հասարակ կարգի հո-  
վուական պաշտօնէն դուրս ծանրութիւններ աւջեւնիս հանած  
են : Արեւի գիտէք, ամենապատիւ Եղբարք, Թէ ինչպէս Արեւ-  
ելքի մէջ, հիմակուան հանգամանաց համեմատ, Հոյիւ մը հո-  
գաց անտուջ ըլլալու ատեն, ստիպուած է չէ Թէ մինակ ժողովրդեան  
կրօնական եւ մտաւորական զարգացման պայմանները ինամելու ,

Հապանսէւ կենցաղական վիճակին դժուարութիւնները՝ որոնք քիչ չեն, ձեռքէն եկածին չափ հողալու: Բայց այսմ՝ Աստուած իր ողորմութիւնը պահաս չըբաւ մեր սիրելի ժողովրդեանը, երբոր քանի մը հիմնարկութիւններ յաջողցուց չէ թէ մինակ մայրաքաղաքիդ, Հապանսէւ գաւառաց մէջ, որոնք դիտաւորաբար Աստուածային պաշտաման՝ կրօնական եւ ուսումնական կրթութեան եւ տկար սեւին աւետարանական հասարելութեանը յատկացած հիմնարկութիւններ են. եւ ասոնք կրցան եւ աւելի եւս դեռ կրնան Աստուծոյ օրհնութեամբը՝ կրօնական, բարոյական ու մտաւորական զարգացում մը յաւաջ բերել ողջամիտ սկզբանց վրայ հիմնուած կարգադրութեամբ եւ գաստիարակութեամբ:

Չէ թէ մինակ Մեր Վիճակին, Հապանսէւ պարագաներն անանկ բերին, որ անկէ դուրս ալ՝ Եկեղեցւոյ օգտին համար Մեր ձեռքէն եկածը չլլանանք, երբոր Օսմանեան Բարձր Տէրութեան մէջ գանուած որ եւ եցէ լեզուի ու ծիսի Ուղղափառաց Արձական-աղբային գործոց հողացողութիւնը իրենց խնդրանոցը համեմատ, յանձն առինք՝ որ Բարձրագոյն Վրան աւելե հողանք:

Հազիւ կրնար Մեր շահաւոր գորութիւնն ասոնց գիմնալ, երբոր նոր եկեղեցական դէպք մը յանկարծ ուրիշ ասպարէզ մը բացաւ Մեզի: Արդէն Բարեյիշատակ Պետրոսի Ութերորդի մահուամբն այրիացած էր ան Աթուր, որնոր հարեբ քան տարիէ աւելի իբրև նոր ու գալար ճիւղ մը օրէ օր կը զարգանար, այսինքն Բենեդիկտոս Չորեքտասներորդ ավանիմաս Վահանայապետին նորոգած Տանն Աղիկիոյ Աթոզիկոսութիւնը՝ որուն առողջ վարդապետութեան հիւթով ուսնացեալ բարունակները շատնց հովանի կը ձգէին իրեն քովը հերձմամբ գօսացած բնոյն վրայ: Սոյն Աթոզիկոսական վիճակին Ապիսիոպոստոնք անցեալ տարի կաթողիկոսուք կը նստէին, արեւելեան եկեղեցւոյ կանոնաց համեմատ իրենց Հովիւ մ՝ ընտրելու: Որք կրնայ Աստուծոյ խորհուրդները քննել, ինքնաշարժ եւ բարեյօժար կամօք կը միաբանին Մեր նուաստութիւնը Աթոզիկոսութեան՝ Աթուոյն պատշաճ տեսնելու՝ գիտելով երկու վիճակաց Աղիկիոյ կաթողիկոսականին, ու Վոյրոյ Վախագահականին մութիւնը:

Ասուզիւ անզուգական էր այս Վիտապետաց վահանաւթեան, եւ եկեղեցւոյ ու ժողովրդեան բարեոյն համար ցուցուցած զհողութեան օրինակը: Այն, Մենք ալ հանրութեան հետ կը

տեսնէինք՝ որ այս նախախնամական գիտութիւնը կաթողիկէայ շայ  
 Ալկեղեցւոյ, զուցէ բոլոր Աբամեան սոհմին կրնայ փրկուէս  
 դարագլուխ մը ըլլալ: Բայց Սէր ակարութիւնն սա բարձր  
 կոչման համեմատ չգտնելով յուսոյ եւ անվտանգութեան մէջ քիչ  
 չէինք ծփար, երբոր ամէն կողմանէ քաջալերութեան ձայներ  
 Սէրի կը հասնէին որ եւ իցէ կարգի անձինքներէ, որոնք սա  
 վիճակներուն միութենէն քիչ բարիք չէին սպասեր: Այն իսկ  
 Բարձրագոյն Տէրութիւնը սոյն Աթուներուն միութիւնը բու  
 վանդակ շայ հասարակութեան համար բարորութեան առիթ  
 մը սեպելը Սէրի չը դանդաղեցաւ յայտնելու:

Թէ այսպիսի ծանր պարագայից մէջ ի՞նչ էր Սէր պարաքը,  
 չէինք կրնար անդիտանալ, ամենապատիւ Աղբարք: Պարաքերնիս  
 ու բաղձանքնիս էր նորէն կոխել ցնծալից ան յաւիտենական ճամ  
 բաները, զորոնք Սէր լուսաւորութեան շայրը բացած է՝ երբոր  
 իրեն եւ իւր յաջորդացը համար շայտասնէն շում՝ դիմեց: Արդ  
 մեզմէ սա վարդապետութեամբ սողորուած չէ, Արիւղէք, Թէ  
 հոս Արեւայեան Աթուն է հովուական իշխանութեան կենդանոյ,  
 եւ Թէ հոսկէ իրուստութեան վասկներն ամէն երկիր կը վազեն,  
 եւ Թէ խախտա է ամէն շէնք, որնոր Պետրոսի վիմի վրայ շինուած  
 չէ. եւ կը ցրուէ, ով որ անոր հետ չի ժողվեր: Առաի ամենուդ  
 բարեմաղթութիւններովը բեռնաւորուած հասանք սա Յաւի  
 տենական Քաղաքը, ուր ամէն կողմանէ՝ մանաւորաբար անմահ  
 յիշատակներու արժանի Աբրաղան Քահանայապետէն շայրական  
 ինամը եւ շաւտոյ Տարածման Դողովոյն Քահերէց Ասեմա  
 պատիւ Ծիրանաւորէն եւ ուրիշ ատենակալ Ծիրանաւորներէն սէր  
 եւ ընդունելութիւն գտնելէն ետքը վերջապէս կրկին վիճակներուն  
 միութիւնն ընդունուելով մէկ Վաթողիկոսական վիճակի ամբողջու  
 եցաւ: Ասանկ Ալկեղեցւոյ դերագոյն Ահապետը Պիոս Թ. իր  
 առաքելական իշխանութեան լուծեամբ վերստին Տանն Արիւ  
 կիոյ Վաթողիկոսութիւնը հաստատեց, Վաթողիկոսական Ալկեղեցին  
 անանկ քաղաք մը փոխադրելով որնոր բոլոր Արեւելքի մէջ առա  
 ջինն ըլլալով եկեղեցական գործաւնութեանց մեծ գերութիւններ  
 կուտայ: Ամսոյս 12 եւ 13 ին վաթիկանեան Պապսան մէջ վսեմա  
 խումբ ծիրանապետ Վարդինալաց եւ բաղմութիւ ազգային Ազիս  
 կոպոսաց եւ ուրիշ արեւելեան Պարթիարդաց եւ արեւմտեան Ա  
 պիսկոպոսաց առաջիկայութեամբ այն կրկին մեծաշուք հանդէսը  
 կատարուեցաւ՝ որնոր Բարեխշատակ Աբրահամու կամ Պետրոսի

Լ. Արեւիկոյ Աթոռիկոսին վրայ Ռենդիկոս Ե. Գ. Վահանա-  
յապետէն 1742 ին. կատարուած էր, ան Պալիունը Սեր ան-  
արժանութեանը որուելով զորնոր մեր Պահաւունի Աթոռի-  
կոսներէն սկսեալ ամէն օրինաւոր Աթոռիկոսը աւարելական  
Վահան ինդրեցին կամ կրեցին, իբրեւ իրենց նոյն Վահան  
ունեցած հաղանդութեանն ու սիրոյն, եւ իրենց Աթոռիկոսու-  
թեանս պաշտանն լուսութեանը նշանակ:

Լ. Եւլաբու ատեն ինչպէս յառաջունէ վտահ էնք, Լ. ա-  
բելական Աթուր մեր հուռցմէ ունեցած, եւ օրինաւորապէս գոր-  
ծածուած էակն արտօնութեանց պակտութիւն մը չընելով ամէն  
բան վերստին հաստատեց, հայրաբար նախահող Եւլաբով միանգա-  
մայն որ ապագայ ժամանակաց վանագալից վերովմամբը չկրնայ  
դիւրաւ հերձուածոյ հողին արտօնութեանց պարտակաւ իրեն  
ճարակը գտնել, այս նախագրու շուրթեան անօրէնութիւնը ուրիշ  
անձնայն Արեւելեան Պարսկաբուրութեանց ալ տարածելով:

Ուստի չէ թէ արժանաւորութեամբ մը այլ Ատուռոյ անմե-  
կնելի կարգադրութեամբը Տանն Հայոց Աթոռիկոս եւ Սրբոյն  
Պրիզորի Աթուռոյն Յաջորդ լուսելու վիճակը Սրբի ինկած  
Սեր Արեւիկոսիպոսունը, եւ Ապիսկոսիպոսունը, բայց եթէ Չեղի,  
աղաչելով որ Չեր աղօթքովը ու գործքովը չդարձրիք Սրբի աջա-  
կեց Եւլաբն, որպէս զի ինչպէս հօռը, նոյնպէս հողը հասա-  
րակաց Եւլայ: Ամէն բանէ յառաջ՝ չմոռնանք, պատուական  
Աղբաբք, թէ շատ մեծազին աւանդ մը մեզի յանձնուած է,  
տէրունական հօսին անանկ մէկ մասը՝ որուն վրայ Աւարե-  
լական Աթուր այնչափ հայրական հող տարած է: Լ. Եւլ  
Ուղղախաւ ժողովուրդը՝ որնոր այսօրուան օրս Սեր հովուական  
հակողութեան տակ է, առանձին կերպով մը Հ. Եւլայ Վահան  
նայապետաց բազմալատակ քրտինքովը պատրաստուած եւ  
սիրարկուած է, զորնոր իրենց պարուց ի դարս շարունակած ան-  
սպասելի աւարելական եւանդեան եւ երկայնուութեան զարմա-  
նալեքներովը վերջապէս ճշմարտութեան ու եկեղեցական մար-  
մնայն հեռ միութեան սասցած են: Իրենց աւ Ատուռած եւ աւ-  
լնկերն ունեցած բազմահար սէրը՝ առ թի չանցուց զորնոր չգոր-  
ծածեց՝ մեծաւ մասամբ ագիտութեան մասնուած եւ ժամանակաց  
գժուարութեան պատճառաւ անկանոն վարժած կլեր մը, կամաց  
կամաց լուսաւորելու սրբելու եւ զարգարելու: Լ. նպատակը



միշտ անոնց աչքին առջեւն էր, երբոր ուխտաւոր պանդուխանե-  
րուն բանակները դէպ ի Արեւելք ճամբելու կը յորդորէին, եւ  
հոգեւորապէս կը ղինէին: Վիւանները լեցուն են իրենց թուղ-  
թերովը, որոնք մի եւ նոյն ասեւն թէ՛ իրենց քաղցրութեան ու  
չափաւորութեան, եւ թէ՛ երբէք մոլորութեան դիւրահաւան ջը-  
զանուելու վարմանայի սուրբոյններով լեցուն յիշատակարաններ  
են: Իրենց նուիրակները Մեր շայրապետաց ու թագաւորաց քով  
ստեղծ Աւաքելական յորդորները կը յեղեղէին: Արջապէս իրենց  
կարգադրութեամբն էր՝ որ սրբակրօն եւ գիտնական Այկեղեցա-  
կաններ խումբ խումբ Մեր հարցը քով կը հասնէին, թագաւորա-  
կան պալատէն մինչեւ գիւղականաց իրճիթը շնորհք, բարեաց  
օրինակ եւ ողջամիտ վարդապետութիւն արեւելով եւ մէկպ կող-  
մանէ միշտ խորագոյն ուսման բերում՝ ունեցող շայ հանձարոյն հա-  
մար Այկեղեցական գիտութեան գանձերը առջեւ անգամ Արեւմուտ-  
քէն բերին: Այժմէ Արեւելքի վրայ նոր արեւներ հասնելով՝ ամէն  
սերտանուածը չբուսաւ, ի վերայ այս ամենայն նոյն ապարակին  
համար երբէք չգաղարեցան հոգալու շուտայ Քահանայապետք  
ամէն ժամու մշակներ խաւրելով, կամ Ազգային ազայք Արեւ-  
մուտք ողջամիտ վարդապետութեան, բարի վարուց և գիտու-  
թեանց մէջ կրթելով:

Աւստի կրկին է աս հօտին նկատմամբ Մեր պարտականու-  
թիւնը, այսինքն չէ թէ մինակ պահել հօտն, այլ նաեւ բազմացունելը  
եւ աս կրկին նկատմամբ պատասխան ունինք տալու թէ անդին  
Մեր երկնաւոր շովուպետին, թէ հոս անոր Վոխանորդին:  
Այժմէ մէկ կողմանէ Աստուածային գազանի վճռոց առջեւ կը  
խոնարհինք հեթանոսաց Աւաքելոյն հեա սրտերնիս ցաւելով Մեր  
եղբարցը համար և ողբալով թէ՛ ինչու՞ Մեր Ժողովրդեան լրումը  
երկնաւոր կոչման ետեւէն չգնաց, մէկպ կողմանէ եւս աւելի ա-  
րիւթեամբ մէջքերնիս պիտոր պնդենք ամէն դժուարութեանց դի-  
մազբաւ ըլլալու որպէս զի վարախին մէջ գանուածներն օր ըստ  
օրէ լաւագոյն անուագ ունենան, և Պետրոսի ցպոյն անսաստելով  
հեռացեալները հոն դառնան ուր որ սկզբնաբար կրկանուէին:

Նոյն շուտայ Քահանայապետաց դործքը Մեզի օրինակ  
ու խօսքերը յորդոր են՝ որ յայտ՝ երբէք յոյսերնիս չկարենք,  
մտածելով որ Աստուծոյ ողորմութեանը չենք կրնար ժամեր ու  
օրեր սահմանել, և ոչ մէկ վարդիւն մը անոր ձեռքը կարծը  
ցած կրնանք երեւակայել: Պատուական Աղբարք, արդէն Աստուած

Դիւան  
Արտի Ալպայմեանի  
Դանիէ - Մարտի

իր միութարութեան ճաշակն սկսած է մեղի զգացունելու : Այն ան  
քրտինքները, նաև արիւններն իսկ, որոնք արդարութեան, ճշմար-  
տութեան և եկեղեցական միութեան համար թափեցան, չէին կրնար  
աս ժողովրդեան համար միշտ անպառու մնալ : Ա՛ստանս, Սարաշ,  
Քիլիս, Թիւրքմէն, Արաբկեր, Մէլիսինէ, Անթաթի, Եգիպտոս,  
Սարաւան, Պիրէնիկ, Պէննէ, Պարսիզակ, Պէլլան, Տարսոն,  
Վեսարիա, Ուլիսիա, Թիւրքմէն և ուրիշ քաղաքներ և գեղեր  
աստ անդ հեռոջեան կաթողիկէ միութեան համար Մեղի  
ձեռքերնին կ' երկնցունեն : Ա՛յ երեւոյթը, պատուական Եգիպ-  
տոսականիցք, անանկ սկիզբներէ յառաջ եկած է, որոնք Չեղի  
անձանցի չեն :

Մեր սիրելի, բայց կաթողիկէ միութենէն դուրս գտնու-  
ած եղբարց հասարակութիւնը պէտք էր որ հերձուածոյ մը բնա-  
կան եղած հեռուութիւնները ժամանակին կրէր, թէ ի վարդա-  
պետութեան և թէ ի կառավարութեան, օրէ օր երթար ու քայ-  
քայէր աւազն վրայ շինուած տան մը ոչէս, երբոր նոր ժամանակի  
հն՝ սպասնալով դերան դերանի քով չթողուլ : Արջաթի ալ կաթող-  
իկէ կրօնն իր շքեղութեամբը, և բոլոր մասանց ամբութեամբ  
զաք, որ ի վերայ լերին կայցէ », սակայն քիչ չեն անոր դէմ ան-  
զգոյններուն մտացը մէջ թշնամի մարդկան անուցած նախապաշար-  
մունքը և անոնց սրտերուն մէջ կաթողիկէ եկեղեցւոյ դէմ թա-  
փած դաւաճութիւնները : Վիսենք, սիրելի՛ եղբարք, Մեր  
ժողովրդեան բերումները : Ա՛նոր համար այս պարագաներուս մէջ  
պէտք չենք աչքերնիս հեռացունել ան դործողութեան դժէն զորնոր  
շատանց մեղի գծած է Ա՛ռաքելական Ա՛թուր՝ երկու կողման գահա-  
վճբազուութեամբ կաթողիկէ միութենէն դուրս գտնուած զորնոր  
հեռ քաղցրութեամբ վարուիլ եւ անոնց վայելած ամէն նկատմունք  
գործածել, եւ մէկալ կողման կաթողիկէ վարդապետութեան եւ  
օրինաւոր կարգաց մասին մէջ սուտ ներողամտութեան ճամբուն չխ-  
տորիլ : Չանոնք նախ մեր անձնական օրինակով դործնականապէս  
ըմբանելի ընել հեռաւորաց ու մերձաւորաց ան արեղբակն  
ձաւառոց ու Սիրոյ միութիւնը որնոր Ա՛ստուածուս արուած  
տիեզերական Պիլիոյ մը հնազանդելով միայն կը յաջողի : Այն ձաւ-  
մայ ձայրապետը զմեզ առանձնաշնորհութեամբ կը զարգարէ,

Իրեն հոգացողութեան մէկ մասը բարութեամբ Մեզի հայտնելով՝  
 Իրեն վստահութիւնն անոր համար է որ Վաթողիկէ Աշխեղեցոյ  
 բեւեռը եղող միութեան հոգւով աղորուելով՝ իբր ճառագայթ  
 հանրութեան կենդանին յարինք: Այս սուրբ Աթոռը միշտ ազգաց  
 ու ժողովրդոց բնաւորութիւններն ու սովորութիւններն, ցորչափ  
 եկեղեցական բարեկարգութեան համաձայն են, կը յարդէ: Ուստի  
 ապահովուենք մեզի յանձնուած ժողովուրդը, որ հռովմէական  
 Աշխեղեցին չէ թէ մինակ ընդդիմութիւն չունի, որ Արեւմտեան  
 լուսոյ հետ Արեւելեան ոգին ու ձեւեր պահպան մեր եկեղեցա-  
 կան սովորութեանց մէջ, հապա ինքն իսկ յահ առջեւնէս վառելով  
 կուղէ բոլոր Արեւելեան եկեղեցիներու մէջ ճշմարիտ նախնական  
 բարեկարգութիւնն օր աւուր վերահաստատել: Յայտնաւե մեզմէ  
 դործակցութիւն մը բաղձալով՝ կ' ուզուի որ քիչ առեւնէն Վաթողի-  
 կոսական Սինհոդոս մը գումարէք եկեղեցական կարգաւորու-  
 թեան առաւելագոյն հաստատութիւն եւ միօրինակութիւն տալու:

Այս ամէն դործառնութեանց մէջ քիչ պիտոր չըլլայ Չեր  
 դործակցութիւնը՝ Սերելի որդեակք ժառանգաւորք, աշխար-  
 հիկք եւ վանականք, որովհետեւ Ղուք պիտոր ըլլաք մեր  
 բազուկները: Ժողովրդեան բազմութեան առջեւ աւելի Ղուք  
 կեցած էք, անոնց աչքերը առաւել եւս մօտուսա Չեր կենաց  
 օրինակները պիտպ տեսնեն, եւ Ղուք էք որ խանձարուրքէն  
 մինչև դադարք անոնց քայլ առ քայլ կ' ընկերանաք: Չեր  
 անունը կը վկայէ, որ զՏէր ձեզի բաժին եւ ժառանգու-  
 թիւն ընարած ըլլալով կրնաք ու պէտք էք բոլորովին Աստուծոյ  
 սեղանոյն եւ անոր ժողովրդեան ըլլալ՝ ձեր միտքը ու ձեր սիրտը  
 կենցաղական հոգերու հետ բաժնելու հարկ չունենալով: Թէ  
 որ երկեր կայ, ուր եկեղեցականաց նիւթական ազատութիւնը չա-  
 վաւորուած է, ամէն ժամանակէ եւ ամէն տեղէ աւելի հիմն-  
 կուան առեն եւ աս մեր կողմիս կղերին բարոյական ազատութիւնը  
 վտանգի մէջ կը տեսնենք: Չեր առջին հոգն ըլլայ, Սերելիք, իւրա-  
 քանչիւր իր կոչման համեմատ, ժողովրդեան ազգեցութենէն եւ  
 աշխարհական ազմէն ազատ դիւրք մը ստանալ եւ նոյնը զգուշու-  
 թեամբ պահել: Առանց ասոր հոգեւոր եռանդը, եթէ մարդ-  
 կային բնութեան սկարութեամբ նուազելու որ ըլլայ, չ' ար-  
 ծարժիր, աստուծային իրաց գիտութիւնը, որուն միշտ պիտոր  
 զգուշանան քահանային շրթունք, կ' ազատանայ, կամաց կամաց  
 բեկեալ սիրտեր մխիթարելու խօսքերը կը պակսին, լեզուն իքիսն

կը կոչէի և սիրան անդգայեալ չի կրնար լացողներուն հետ լալ, չի կրնար հիւանդացողներուն հետ հիւանդանալ :

Չըլլայ որ խարուիք Սիրելիք, ձեր պաշտօնին ծանրութեան նկատմամբ : Աթէ կը տեսնենք քովերնիս անջատեալ կղեր մը, որուն մէջ սորվեցնելու պաշտօնը խորհրդոց մատակարարութեան պաշտօնէն անանկ բաժնուած է, որ ի վրաս կլէրին ու ժողովուրդեան մայնդանցն, մէկ մասն վարդապետութեան, մէկայ մասն ալ խորհրդոց մատակարարութեան և հոգւոց հոգէն զօրկ է, ասոր կաթուղիկէ կրօնին կանոնները չեն կրնար հանդուրժեր : Վաթուռ զիկեայ ուղղախաւ քահանան ոչ մէկը եւ ոչ մէկայը կրնայ անիոյթ ընել : Իւրանքանչիւր քրիստոնէի բեւանը վրայ՝ նոյն իսկ հրեշտակային ուսերու համար ծանր բեւ մը առած ըլլալով քահանայի մէջ կն այսօրուան օրս մանկութեան վտանգները, և դժուարացած է անոնց դատարակութիւնը, որնոր ահաւասիկ ձեր տոսի ստացած էք, շատ անգամ՝ լալով կրտախուլինք լսելու, ապաւարայ աւար կերթայ : Աս անսովոր պարագաները իրօք չէ թէ պիտոր ինքն մեր բոլոր զօրութիւնները ժողովուրդ : Ա՛յ վախճար, առձոյ քահանային գործողութիւնները ու քայլերը անանկ իր կանոններով գծած է, որ կրնայ անոնց մէջէն անվրաս անցնել, անմեթեամբ եւ արդարութեամբ ծաղկիլ : Ա՛յ երջապէս չենք կրնար ժառանգաւորաց ուղղած խօսքերը ձեզի յիշեցնելու. այսինքն, որ հնարանդիք, եւ յիշելով ձեր կոչումն ու պատիւը՝ վարուց ծանժողովուրդ առաւել եւս կը յորդորուի ի սէր եւ ամէն բան, որով ձեր աստիճանին : Աւասի մեծապէս զգուշանալով ան բռնութիւն, որոնք եկեղեցականաց արգիլուած են եւ չեն վայրէջ, յանձն չաւրելլ այլ մանաւանդ թէ աշխատեցէք զձեզ բարի գործոց օրինակ ընծայելու ի բանս, ի կենցաղավարութեան, ի սէր առանց կեդ

Ժաւորութեան, ի վարդապետութեան, ի մարբութեան : Արքայ  
 աւ հարկի կամ հողեւոր պաշտաման պատճառաւ աշխարհականաց  
 հետ կենցաղավարելու ԲՂԼԻՔ՝ ամէն գործքերնուդ մէջ եկեղեցա-  
 կան անձին պատիւը ու մեծութիւնը այնպէս ջանաք պահելու, որ  
 ամենայն աւաքնութեան զարդուք վայելելով Քրիստոսի անու-  
 շահտութիւնը բուրէք : ՉԲՂԼԻՔ՝ որ հողգութիւն ընէք, մանա-  
 ւանդ աստուածային գրոց եւ սրբական գիտութեանց պարայելու,  
 որպէս զի կարող ԲՂԼԻՔ՝ պատասխան ապա ձեր բերնէն օրէնք  
 փնտաւորներու, եւ Աստուծոյ եւ եկեղեցւոյ պատուիրանները ազի-  
 տաց ու մարբելոց սարկեցնել : Աւ աւանձին խնամով չէ թէ ինչ  
 որ ձերն է, այլ ինչ որ Յիսուսի Քրիստոսի է՝ ան փնտաւելով  
 փոյթ տարէք, Արեւիք, ձեր հողեւոր պաշտաման գործը բարեպաշ-  
 տութեամբ եւ սրբութեամբ կատարելու, եւ միաբան միասիրտ  
 ձեր բոլոր ջանքը ձեր սեպհական Աւանորդաց ջանքերուն հետ  
 միացնելու անփոյթ մ՝ ԲՂԼԻՔ՝, որպէս զի հաւատացելոց յաւատե-  
 նական փրկութիւնը հոգաք, եւ մեր սուրբ հաւատքը եւ անոր  
 վարդապետութիւնն աւաւել ծաղկի. եւ իրէք նետէք ասորաձայ-  
 նութեան սերմերը եւ քրիստոնէական միաբանութեան եւ խողա-  
 զութեան սէրն ամէնուն սիրտը անկէք :

Ար մնայ որ մեր խանդաղատական ձայնը ձեզն գարձնելով,  
 ամենասիրելի ի Քրիստոս որդեակք, բարեպաշտ հաւատացեալք,  
 ամէն բանէ աւալ յորդորենք եւ աղաչենք ի Տէր, որ ձեր  
 օրինաւոր Աւանորդաց պարտաւոր հաղանդութենէն բան մը  
 պակաս չընէք, գիտնալով որ ճողին Սուրբ զանոնք դրած է Աս-  
 տուծոյ եկեղեցին հոյուելու, եւ ձեր փրկութիւնը անոնց յանձնու-  
 ած է եւ ձեզն համար կրկին համար ունին տալու, օր մը Քրիս-  
 տոսի Տեառն մերոյ եւ հոս միշտ անոր Փոխանորդին : Աւստի ու-  
 ընչ բան չեն ըներ բայց եթէ իրենց պարտքը, երբոր զգուշու-  
 թեամբ կը հսկեն եւ կ'աշխատին, որ զձեզ փրկութեան ձամբան  
 հոյուեն ճշմարտութեամբ, տկարացեալք կը զօրացնեն, խախտածը  
 կը հաստատեն, խոտորածը կը շեակեն եւ փրկութեան խօսքերով  
 կը զձեզ յաւատենական կենաց կը անուցանեն, որպէս զի Աստուծոյ եւ  
 եկեղեցւոյ օրինաց զգուշաւոր պահպանութեամբ շողաք իբրև ըն-  
 տիրք ի մէջ կամակոր եւ խեղաթիւր մարդկան :

Անուադիր չենք, Արեւիք թէ այս մասին վտանգաւոր հող  
 մերու աւջեւ էք : Արդէն շատոնց բանի մը արեւելեան թիւր  
 գաղափարներ զորոնք անդադար լսելու ստիպուած էք եւ որոնց  
 \*

միշտ կը հրաւիրուիք, չէին դադարիր զձեզ նեղելէն. նոր աւսեաներս արեւմտեան ժամաքեր դազախարաց հոանք մ' ալ դիւմեց իրարու խառնուելու :

Արեւելեց թիւը գազախարաց պիտաւորը կրնանք աշխարհականաց եկեղեցական գործաւնութեանց միջամտութիւնը սեղել : Չկայ, Արեւիք, ասկէց աւելի վնասակար, ասկէց աւելի մահաբեր սխալմունք, երբոր ասանկ երկու իշխանութիւն, աշխարհական ու եկեղեցական, օժեալ չօժեալ ձեռուընկեր իրարմէ չեն զանազանուիր. եւ ան՝ որ հօտ է, ան՝ որնոր ոչխար է, հովիւկ՝ բլլայ, եւ հովիւները հօտ կը ձեւանան, անոնք՝ որոնք պիտոր սորվին, կը սորվեցունեն, եւ որոնք որ ի Քրիստոսէ հրաման ունին որ սորվեցունեն, լւելով աշակերտաց կարգը խոնարհած կերեւան : Այս ասանկ կը տեսնէք ձեր բոլորոնքը, բայց ասիկայ հերձուածոյ մը դասն հետեւութիւն է . « Արովիւք մեղունչէ դք, նովմբ եւ պատժեացի » : Հոն կղերը, եկեղեցական մարմնոյն միութեան Աստուծմէ Գրուած կենդրոնէն բաժնուած, ինք զինք ինքնագլուխ բրած ասեան, ինչպէս որ իրաց բնութիւնը կը պահանջէր, ժողովըդեան գերի եղած է եւ միանդամայն անհանդուրժելի բեռ մը, անանկ որ կղեր ու ժողովուրդ սուրբ եկեղեցւոյ ոգւոյն եւ օրինացը գէմ՝ ձեռք բերած անկախութեան դժնդակ հետեւութեանց նշանները երարու վրայ կը տեսնեն : Արեւիք, եթէ կորսուած քաղաքային իշխանութեանց ու վարչութեանց փոխաբէն եկեղեցական սահմանի մէջ միթարութիւններ գտնել ուղուի, ասուգիւ չի կրնար աստուածային օրէնքը աս սեղանաւ կապտութեան տեղի տալ : Եթէ Արեւելքը եր հիմակուան շղթաւ յայտմ եղած է իր մեծագոյն յանցանքը, որ Վաստուծոյն Աստուծոյ եւ եկեղեցւոյ թողուցած չէ :

Արեւ մոգական ձայն մը ազգերու եւ ժողովուրդներու խելքը կ' արբեցնէ, այսինքն, ցեղի կամ ազգայնութեան անուն կամ սէրը : Արեւիք, լիսպէս համոզուիք, որ չկայ ճշմարտ, չկայ բարի, չկայ գեղեցիկ ու վայելուչ բան մը, որուն մեր սուրբ կրօնը գէմ՝ գայ կամ արգելք բլլայ : Ճշմարտութեան գէմ՝ կը խօսին եթէ չարամիտք զձեզ համոզելու կը ճգնին որպէս թէ ուղղախաւ կրօնի ու Առաքելական Աթուոյն սէրը Ազգին ու Հասարակութեան սիրոյն կը փաստէ, չի տածեր կը խեղդէ անոր սեպհական ոգին : Չէ, Արեւիք, նոյնը մանաւ

ւանդ կ' աղնուանցնէ , նոյնը կը կարդաւորէ եւաւելի բանաւոր  
 կրնէ : Որվ կրնայ աղգասիրութիւն կամ հայրենասիրութիւն լոտու  
 ծը աւաքինութիւն անուանել , երբոր այնչափ վայրենանայ , որ անոր  
 աստուածային ու մարդկային օրէնք զոհուի , երբոր եկեղեցին անոր  
 միջոց , չէ թէ վախճան բւնուի , երբոր որ եւ իցէ կրօն՝ ճշմա  
 րիւս կամ սուա , հոգ չէ , միայն անոր համար պահել ուզուի , վասն  
 զի բարաքական կամ շահագիտական ատեութեամբ առ ժամս օգտաւ  
 կար կ'երեւայ , իբրեւ թէ երկնաւոր ճշմարտութիւնները ներքին  
 արժէք մը չունենան , եւ մեր Ազգակիցք միմակ աս կենաց հա  
 մար ծնած ըլլան , եւ չըլլայ ուրիշ բարձրագոյն բարեք , որով  
 կարող ըլլան թէ հոս յարասուաց վայրի , որչափ հնար է , եւ  
 թէ անդին երջանիկ ըլլայ : Ճշմարիտ քրիստոնէութիւնը անանկ  
 բարձր կարգի ճշմարտութիւններ մարդկան հաղորդած է , որ անոնց  
 սահմանը մտած ատեննիս ալ խիստ ցեղական բաժանումները կը  
 ըւեն , ատեներով որ յոյն , հւովմայեցի , խուժ գուժ , սկիւթացի ,  
 ծովերէ գետերէ եւ լեռներէ անդին կամ առջին մէկ երկնաւոր  
 օր մը որդեգրութեան մէջ կը միանան՝ Վրիստոսի Տեաւն  
 մերոյ ժառանգութեան հաւասար իրաւունքով եւ օրդոյն Արբոյ  
 պարգեւներուն վրայ միասլէս յուսարով : Վրիստոնէական կրօնը  
 շինուած չէ աղգաց եւ լեզուաց զանազանութեան վրայ , հազա  
 անոր հակառակ , սոս է քրիստոնէութեան հիմնական գաղափարը ,  
 որ ամէն մարդիկ կրկնակի արեւակից են իրարու , այսինքն , ինչ  
 պէս մի եւ նոյն հօր արեւնէն սերելով՝ յանցանք մահ ու դատաւ  
 պարտութիւն , նոյնպէս միոյն Վրիստոսի արեւն կցորդութեամբ  
 շնորհք , արդարութիւն եւ յաւիտեանական կեանքը կբաւանգեն :  
 Չի կրնար բան մը ան միտթարութեան սեղը լեցունել , զորնոր  
 ճշմարիտ քրիստոնեայն կ' զգայ , երբոր ինք զինք ան մեծ Գեր  
 դասանին մէջ կը գտնէ , որուն հանուակեր Աստուծոյ մարմնաւ  
 ցեալ Ռանն է , որնոր իր օրդուով Արբով յանրեւոյթս եւ Պետաւ  
 սիւ որնոր իր յաջորդներուն վրայ միշտ կենդանի է , զանիկայ երեւ  
 լեւապէս կը կառավարէ , կը սրբէ ու կը սնուցանէ . որուն մէջ  
 աղքէ եւ ալինք իրենց սէրը մի եւ նոյն Գերագոյն օր մը իբրեւ  
 սիրոյ կենդրոնի մը վրայ ժողուած են , ուսկից ըտոր երկիր քրիստո  
 նէական հասարակութեան ամէն մէկ անդամներուն զանազան վը  
 տակներով անսպառ լոյս եւ խաղաղութիւն կը դառնայ եւ միշտ  
 ճշմարիտ կը մնայ թէ « Ամենայն հաւատացելոց է սիրա եւ անձն  
 մի » : Ա երջապէս , Արեւիք , եթէ մեր ուղղափառ ժողովուրդը

ինչ ինչ առաւելութիւններ ունեցեր է, քաղաքակրթական, բարոյ-  
 յական եւ ուսումնական, անաչառ խօսելով, նոյները մինակ կա-  
 թուղիկէ կրօնին պարտական է: Անոր համար կրնանք, մանաւանդ  
 թէ պէտք է, Սերելիք, ամենայն կերպով վստահ ըլլալ՝ որ աս  
 ճամբէն, եւ մինակ աս ճամբէն մեծադոյն օրհնութիւններ մեզի  
 նախախնամութենէն պատրաստուած են: Իրաւամբք սակէ քիչ տա-  
 րիներ առաջ մեր Սրբազան շայր մեր ազգին աշուտականաց եւ  
 իշխանութեամբ կամ ճոխութեամբ յառաջադէմներուն իր խօսքը  
 դարձունելով՝ կ'ըտէր թէ ձեր հոյակապ եւ ականաւոր ազգին սակէ  
 աւելի մեծադոյն եւ օգտակար բան չի կրնար ըլլալ որ ինչպէս  
 փառօք ու պատուով, անսնկ ալ աւարքինութեանց լուսով ուրիշ  
 ներէն աւելի շորաք. վասն զի քրիստոնէայ ժողովուրդը ձեզմէ  
 օրինակ կ'ուզէ, որ անոր հետեւի: Աւստի աւելի եւս ձեզմէ կը  
 խնդրենք, որ բարեպաշտութեամբ եւ համաշունչ միաբանութեամբ  
 յառաջադէմ ըլլալով չէ թէ մինակ եկեղեցւոյ եւ ձեր սրբազան  
 Առաջնորդաց գիւնդեր չըլլաք, ինչպէս դժբաղդաբար կը տես-  
 նուի կաթուղիկէ միութենէն բաժնուած հասարակութեանց մէջ  
 հապա ձեր բոլոր ձիւզն յայն ժողովք, որ կաթուղիկէ եկեղեցին  
 օր ըստ օրէ աւելի դարգանայ ձեր կողմերը, եւ ամէնքը պատշաճ  
 յարգութիւն եւ հնազանդութիւն մատուցանեն թէ այն դերադոյն  
 եւ լիակատար իշխանութեան, որնոր Արարոսի եւ անոր յաջոր-  
 շնորհուած է, եւ թէ ան սուրբ եւ յարգելի իշխանութեան, զոր  
 Ապիստոլոսը իրենց հօտին վրայ ունին. որովհետեւ աս երկու  
 իշխանութիւնը ոչ երբէք քաղաքական իշխանութեան մը տակ  
 կրնայ ինչպէս հպատակել: Ահաւասիկ կը տեսնէք, Սերելիք, թէ  
 նայն բարիք հատուցանող Աստուծմէ, եթէ մեր իրատուց ու բաղ-  
 ձանաց անաբով մեր ամենատուրը կրօնին օգուտն ու պայծառու-  
 թիւնը ձեր բոլոր կարողութեամբը ջանաք հոգալու: Ասոնք են,  
 ուղղելու նոյն են մեր Սրբազան շօր Արտի յորդորներն ալ, զու-  
 համար մեր նուազութեանը իր աւարքական օրհնութիւնը  
 յանձնելով:

Երանարհինք պատուական Աղբարք, սիրելի աւատացեալք,  
 Երանարհինք սրտի մտօք որովմութեանց հօր եւ մխիթարու-



Թեանց Աստուծոյն առջեւ, շնորհք լոյս եւ զօրութիւն խնդրելու, բարեխօս բռնելով մեղի իրեն Սիւսան Որդւոյն փառաւոր Սայրը երկնից ու երկրի անարատ Թագուհին ամէնուս յոյսն ու քաղցրութիւնը: Ասոր առանձին պաշապանութեանը տակ դբաւ նաեւ Սրբազան Վահանայապետը մեր եկեղեցին, մեր կաթողիկոսութիւնը ու մեր Ազգը, երբ անցեալ յունիս ամսոյն 27 ին հոլուական ինամասարութեամբ մեր Ազեղեցւոյն բարօրութեան եւ հաստատութեան հանդամանքները անօրինելու համար մեր նուաստութիւնը ազգային եպիսկոպոսակցօք հանդերձ ընդունելու ատեն՝ Աստուածածնայ հրաշագործ պատկեր մը իբր յիշատակ մեր նուաստութեանը ընծայելու բարեհաճեցաւ: Ասոր ուրեմն մեր մրքիկներուն ու վանանքներուն մէջ վերջանէնք աչքերնիս, Սիրելիք, որնոր իբրեւ լուսալիբ ասող կը փայլի մեր պեկած ճանքուն վրայ, որով հայրենիք կը դիմենք:

Քեզի վերջապէս կը պաղատինք, Հայաստանեայց լուսաւորութեան Հայր, նայէ՛ հաշտ ակամբ այս հոլուական Աթոռոյն որնոր քուկը է, քու արդեամբը է, եւ աս ժողովրդեան, որնոր Քու Պեարտսի Վահէն բերած վարդապետութեանդ եւ օրինակիդ անխտոր կը հեատելի: Ղուսն Հայր, որ արդէն երկնանոր Աբուսաղէմի մէջ փաւօք ու պատուով պահուած, կ'արբէնաս Աստուծոյ աման պարարտութենէն, մի՛ դադարիբ մեր փրկութեան հոգէն, մի՛ լուեր մեր սիրելի եղբարց համար բարեխօսելէն, որնք Քու վարդապետութեանդ լրումն չեն պահեր: Ահա Քեզի հետ սպիտակահանդերձ կը ցնծան ան երկու ազանիք Վայխանէ եւ Հախիսիմէ, որնք աս եօթն բլուրներու քաղքէն Հայաստան թուան, հոն հառվմեական հաւտքը իրենց արեանը հետ սերմանելու: Խառնեն կ'աղաչենք, խառնեն ասոնք ալ Աստուծոյ Ղառն առջեւ իրենց աղաչանքները Քու կիներուդ, որպէս զի յաղթանակէ երկնաւոր Ճշմարտութիւնը ամէն միտքերու, սիրէ սէրը բոլոր սիրտերու, եւ ամենուն վրայ փառաւոր բլրայ անուն հետուն մերոյ Յիսուսի Քրիստոսի այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս:

627  
1023



191

Հրատմ  
Արամի Այստ  
Կոնյակ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0568896



64  
1023